ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 7
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**
**08.07.2024Թ.**

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 23 անդամները:

Բացակայում են Արթուր Գալստյանը, Գառնիկ Սահակյանը,Գարիկ Պալյանը և Անահիտ Խեչոյանը :

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

***Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը , Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

Նիստը սկսվելուց առաջ , Չարեցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուրեն Մուրադյանը տեղեկացրեց, որ ավագանու երկու՝ իրավա-հասարակական հարցերի մշտական և կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների նիստերը չեն կայացել քվորման բացակայության պատճառով:

***Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:***

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>***

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
4) «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

5) Չարենցավան համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:
6) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող 07-019-0023-0003 կադաստրային ծածկագրով հողամասից 0.0198 հա ընդհանուր մակերեսով հողամասը նվիրատվությամբ Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու մասին:
8) «ՄԻՐԱԺ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
9) Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:
10) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

**Կողմ-15** **դեմ - 0** **ձեռնպահ -8**

***Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***1. Չարենցավան համայնքի 202 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի. ***առաջարկում եմ.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:
***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 14** **դեմ- 1** **ձեռնպահ-8**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

*Լսեցին.*

***2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով՝ ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | նվիրատվություն, ժառանգություն իրավունքով ֆիզ. անձանցից, կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինությանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացվող մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուր-ից | | 15187,39 | 0 | -15187,39 | 0 |
| 01-1-1 | **Արտաբյուջե** | **0051** | **0** | **0** | **15187,39** | **15187,39** |

**/հազ. դրամ/**

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 01 | 1 | 1 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում՝* | | | | | |
| | | | **Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում** | 5113 | 10846,83 | 0 | -10846,83 | 0 |
| | | | **Վարչական սարքավորումներ** | 5122 | 4340,56 | 0 | -4340,56 | 0 |
| 01 | 1 | 1 | *Արտաբյուջե, որից՝* | | | | | |
| | | | **Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում** | *5113* | *0* | *0* | 15187,39 | 15187,39 |

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-22 դեմ- 0 ձեռնպահ-1**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***3. Զարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. ***ԶԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 5424.5 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի N | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 01 | 01 | 1 | Կոմունալ ծառայություններ | 4213 | 1769,0 | 300,0 | 0 | 2069,0 |
| | | | Համակարգչային ծառայություններ | 4232 | 410,0 | 160,0 | 0 | |
| 01 | 06 | 1 | Վարչական ծառայություններ | 4231 | 0 | 200.0 | 0 | 200.0 |
| | | | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 6610,0 | 1000,0 | 0 | 7610,0 |
| | | | Կապիտալ դրամաշնորհ | 4657 | 0 | 0 | 2910.7 | 2910.7 |
| 08 | 01 | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 4729 | 0 | 600,0 | 0 | 600,0 |
| 09 | 01 | 1 | Նախադպրոցական կրթություն | 4657 | 0 | 253,8 | 0 | 253,8 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 16 դեմ-0 ձեռնպահ-7**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***4.* «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:**

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով այն, որ Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի հիմնական հատվածի ոռոգումն իրականացվում է «Ալափարսի սիֆոն» բաժանարարից և կապված «Արգել ՀԷԿ» ուղղաթեք ջրանցքի թողունակության մակարդակի տատանումներից, ոչ միշտ է հնարավոր լինում իրականացնել ջրամատակարարում: Նշված ջրանցքում հորիզոնների տատանման հետևանքով ջրամատակարարումը դադարում է, որից հետո վերականգնման համար ծախսվում է երկար ժամանակ, ինչի արդյունքում խախտվում է ոռոգման սահմանված ռեժիմներն ու գրաֆիկները: Անհրաժեշտ է, որ կատարվեն շինարարական աշխատանքներ և նշված բաժանարարը սիֆոնային միացումից փոխարինվի հատակային ուղիղ միացմամբ: Նշված աշխատանքների դեպքում ջրանցքի հորիզոնի տատանումների ժամանակ ջրանջատումներ չեն լինի և հետևաբար հնարավոր կլինի Ալափարս գյուղի հիմնական հատվածին ապահովել կանոնավոր ջրամատակարարում՝ որը պահանջում է վերականգնման աշխատանքների իրականացում, ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու ծախսեր բյուջեի «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածից և «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը հատկացնել 1 733 800 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ խողովակների ձեռք բերման և հորատման աշխատանքների իրականացման հարցում, ընդ որում հողային և եռակցման աշխատանքները կիրականացվեն ընկերության միջոցներով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***5. Չարենցավան համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:***

***/Զեկ. Բ.Բալբաբյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման պահանջներով՝ ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Չարենցավան համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշռի վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:***

***/Զեկ. Բ.Բալբաբյան/***

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածում և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող 07-019-0023-0003 կադաստրային ծածկագրով հողամասից 0.0198 հա ընդհանուր մակերեսով հողամասը նվիրատվությամբ Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու մասին:***

***/Զեկ. Բ.Բալբաբյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրությունը և Չարենցավան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***առաջարկում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող, 07-019-0023-0003 կադաստրային ծածկագրով, Չարենցավան համայնք գ. Բջնի 4–րդ փողոց 1–ին փակուղի թիվ 3 հասցեով՝ հողամասից 0.0198 հա ընդհանուր մակերեսով հողամասը (բնակավայրերի և էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, իսկ գործառնական նշանակությունն՝ այլ հողեր և կոմունալ ենթակառուցվածքներ) նվիրատվությամբ տրամադրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***8. «ՄԻՐԱԺ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:***

***/Զեկ. Ս.Բալաբեկյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» N 1325-Ն որոշման 28-րդ կետով, ***առաջարկում եմ.***

1 «ՄԻՐԱԺ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2 Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***9. Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:***

***/Զեկ. Վ.Մակինյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի և նույն վարչության դատախազի «Առաջարկություն՝ հայց ներկայացնելու վերաբերյալ» գրությունները, ***առաջարկում եմ.***

1. Համայնքային շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցել իրավասու դատարան.
   1) Անվավեր ճանաչել Ալափարս համայնքի ղեկավարի 01.12.2006թ. թիվ 40 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեում Արթին Արշավելի Գյուլբուդաղյանի անվամբ 28.09.2021թ. կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումը:
   2) Անվավեր ճանաչել Ալափարս համայնքի ղեկավարի 11.04.2017թ թիվ 25-Ա որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 08.02.2018թ. թիվ 27 եզրակացությունը, Չարենցավան համայնքի ղեկավարի 26.02.2018թ. թիվ 150 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեում Համլետ Մկրտչյանի անվամբ 18.04.2017թ. 13.12.2017թ. 02.03.2018թ սեփականության իրավունքի պետական գրանցումներն և սեղանամատյանի գրառումները:
   3) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 23.11.2011թ թիվ 597 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեում Սպարտակ Հովհաննիսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումը:
   4) Անվավեր ճանաչել Ալափարս համայնքի ղեկավարի 01.12.2006թ. թիվ 39 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեում Արայիկ Հայկազի Բաղդասարյանի անվամբ 01.02.2007թ. կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումը:

5) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 19.11.2020թ. թիվ 919, 03.09.2021թ. թիվ 947 որոշումները և որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեում Արտուր Անտոնյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումը:

2. Սույն որոշումից ծագող վճարումները կատարել Չարենցավան համայնքի բյուջեի հաշվից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-20 դեմ-0 ձեռնպահ-2**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***10. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ. Ս.Բալաբեկյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 1-ա թաղամասի 2-րդ շենքի 29 բնակարանի բնակիչ Վահիդա Աթանեսյանի 2024 թվականի հունիսի 26-ի թիվ 2982-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, **առաջարկում եմ.**

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Վահիդա Սերգեյի Աթանեսյանին :**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

**«Միասնական համայնք դաշինք» խմբակցության ղեկավար Նորայր Վարդանյանը առաջարկեց ավագանու ուղերձով դիմել վարչապետին անձնագրային ծառայությունների մատուցումը կրկին Չարենցավան քաղաքում իրականացնելու վերաբերյալ, սակայն Չարենցվան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները որոշեցին հարցը քննարկել նաև խմբակցության ղեկավար Արթուր Գալստյանի հետ, քանի որ նա բացակայում է:**

Քննարկվեց քաղաքի փարաջքում փողոցային առատուրը կերացնելու և ավելի խիստ վարչարարություն կիրառելու աշխատանք տանելու հարցերը:

*Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝*

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան
Մալխասյան Նորիկ
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Պապոյան Դավիթ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

*Նիստն արձանագրեց Ս.Մուրադյանը*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ